յոյժ գիտնական և ունէր աշակերտս բազումս»[1]։ Որպէս և յետ այնր (ի թուին 1728) մի ուրիշ Յակոբ վարդապետ Զամախեցի արտագրել է մեկնութիւն Ժամագրքի ՌՃՀԷ 1728. և գրել է պատմութիւն ժամանակագրական. (տես մայր ցուցակ գրադարանի Ս. Էջմիածնի, հմ 1414—8, և 1700—1)։ Այսպէս եւս Վլաս վարդապետն Զամախեցի արտագրել է Հոդեաց գիրք, ՌՃԻ. 1671) ի մայր ցուցակի նոյն գրադարանին հմ. 858—[3]1)։ Միքայէլ վարդապետ Աւետարանոց գիւղէն Ղարաբաղու արտագրել է Սաղիանի վանքումն մեկնութիւն Պրոկղի գրոցն ի Սիմէոն եպիսկոպոսէ Դառնեցւոյ, թուին ՌՄԾԲ (1792)։ (Այս գիրքը Սաղիանի վանքումն է)։

Մէյսարու վանքի և գիւղի մէջ տեղումն կայ և մի ուրիշ մատուռն սուրբ Նշանի անուամբ, որը նորոգել է Զամախեցի Բագուաբնակ Տիկին Աննայ կին պարոն Յովհաննէսի Քալանթարեանց յամին 1879. և նորոգութեան արձանագիրն է,

«Նորակառուցեալ տաճարս Մէյսարու գիւղի, որ կոչի սուրբ Նշան, է անմոռանալի սիրոյ յիշատակ բնակչի, Շամախու քաղաքի Աննայի կողակցի պարոն Յովհաննէս Քալանթարեանցի։ Ուխտաւորք և հանդիպողքն թող միաբերան տան զողորմի Քալանթարեանցին. թվին 1879. 29 օգոստոսի»։

Յիշեալ տիկնոջ որդին յարգոյ Գէորգն Յովհաննէսեան (Ե-

---

[1]) Յակոբ Կաթուղիկոսի աշակերտաց մին էր Սիմէոն կաթուղիկոսն Երեւանցի, տես կենսագրութիւն Սիմէոն կաթուղիկոսի. Արձագանք 1894 փետրվ. 20. №21։

[2]) Վլաս վարդապետը երեւում է առաջնորդական պաշտօնով Կապաղակ (Գապալայ) գաւառակում, ըստ արձանագրութեան սուրբ Աստուածածին եկեղեցւոյն մեծ Սօկիւթլիւ գիւղի, որ ըստ այմ «կառուցաւ սուրբ Աստուածածնայ եկեղեցիս ի Հայրապետութեան Տեառն Յակոբայ (Էջմիածնի), և ի կաթուղիկոսութեան Տեառն Սիմէոնի (Աղուանից) և յառաջնորդութեան Վլաս Վարդապետի Շամախեցւոյ. թվին ՌՃԻ։